


WIEN 62  
BESTELLT  
17.7.01  
5-9 V

ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՒԹՅՈՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 ձր.  
Վեցամսեայ 6 »  
Արտասահմանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Անկախ Պուշկարի համար  
Տարեկան 3 ձր.  
Վեցամսեայ 1.50 »  
**ՊԱՆԺԻԿ ՎՃԱՐՆԵՐԸ**  
Մանուկն առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեսին առաջին անգամներու համար 20 Օլլ զեդը կը լրայ :

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Մանակ և գրամ զրկիկ  
Խմբագրութեան հասցիկն  
—  
Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)  
Իրաւիւնի և յեւ. սրբ. իր  
Արտասահմանի ձեռնի  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պուշկարիոյ համար ձեռնի  
( 15 ՍԱՆԹԻՄ )



Այսօր, կէս օրէն ետքը, Վառնա քաղաքը Մեծ Իշխան Ալէքսանտր Միխայելովիչի ներկայութիւնը վայելելու բարեբախտութիւնը պիտի ունենայ : Այս այցելութեան անդրանիկ լուրը ամբողջ երկիրը անբացատրելի ոգեւորութեան մէջ ձգեց : Ի հարկէ, պուլկարներու համար մեծագոյն նշանակութիւն ունի, մանաւանդ ներկայ հանգամանքներու մէջ, այդ տեսակ այցելութեան մը արժանանալը : ուստի և որքան հրաճուին տեղն է :

Պուլկար կառավարութիւնը — եթէ ո՛չ ժողովուրդը — այսօր խոր զղջում մը ունեցած կերբեայ, իր առաջին քայլերուն մէջ հետեւած ըլլալուն համար անանկ անուա ճամբու մը՝ սր քիչ մնաց զիրենք չարաչուք վախճանի մը պիտի մատնէր : Այդ «ճուռ ճամբան» Ռուսիոյ խրատները մտիկ չընել, անոր քաղաքականութեան և ձգտումներուն արձագանք ըլլալ յանձն շտանքն էր : Հիմա, պուլկար կառավարութիւնը անհրաժեշտ հարկ կը զգայ Ռուսիոյ համակրութիւնը վայելելու : և այդ պատճառաւ պատրաստ է ամէն զոհողութիւն, նոյնիսկ թեթեւ, գիւտնագիտական զիջումներ յանձն առնել՝ այդ համակրութեան արժանանալու համար :

Այսօր, Պալքանեան երկիրներու հաւասարակշռութիւն մը կայ, ինչպէս կայ եւրոպական պետութեանց հաւասարակշռութիւն մը : Այդ հաւասարակշռութիւնն է որ կը հակակշռէ Պալքանեան փոքրիկ պղծութեանց յաջողիտ ձգտումները և ընդարձակումի, աշխարհակալութեան գեռ անյագ ծարաւնին : Այդ հաւասարակշռութիւնը սակայն իր սնունդը կը գտնէ եւրոպական շահակից տերութեանց գրեթէ անմիջական վերին հսկողութեան մէջ :

Պուլկարիոյ համար այդ վերին

հսկողութիւնը ժամանակէ մը ի վեր Ռուսիա ստանձնած է : Յեղի, կրօնքի ու լեզուի կապերը, քաղաքական աւանդութիւնները այն տեսակ կապ մը ստեղծած են պուլկար ազգին և Ռուսիոյ միջեւ, որ Պուլկարիա չի կրնար հրքեք զանց առնել, արդի պայմաններուն մէջ, ուստի հոգաւորութիւնը, ըլլալ հետեւանց, ըլլալ ուղղակի, առանց ինքզինքը ներքին խռու

պատրաստութիւնները տեսնելու համար : Մեծ Իշխան Միխայելովիչի այցելութիւնը յառաջիկային պիտի փոխանակուի իշխան Ֆէրտիանտի Իեթերպուրկ այցելութեամբ : Իշխանը, անշուշտ Ձարին տրամագրութիւնները մօտէն շօշափելէ ետքը, պիտի հրաւիրէ զայն, որպէս զի Պուլկարիա այցելէ յառաջիկայ գարնան և ներկայ գտնուի Սօֆիա մէջ, իր մեծ

ձեռքերուն զօրանալը և խմորումը այն տեսակ գէպերու՝ որոնք մօտալուտ մեծ աղէտքը պիտի պայթեցնեն իր գլխուն : Այս խորհուրդներուն հետեւանքն է անշուշտ պուլկար ազգին մէջ տիրող ընդհանուր ոգեւորութիւնը :

Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Ալէքսանտր Միխայելովիչ, Ազատարար Չարին և Մեծ Իշխանուհի Օլկա Թէօտորովնայի եղբոր հինգերորդ զաւակն է : Մնած է 1866ին, ապրիլ 1ին, Թիֆլիզի մէջ, երբ իր հայրը կողկափ փոխաբայ էր : Հիմա, 35 տարեկան է, իր ուսումը աւարտելէ ետքը ուստական նաւատորմի ղեկավար է իրրեւ սպայ, և 1886 սեպտ. 25էն մինչեւ 1889 յունիս 8 կը տեսնենք զայն «Ինտա» շոգենաւով աշխարհի շրջանը ընելու : 1890—1891ին իր եղբոր, Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Սեդիկի Միխայելովիչի հետ երկրորդ հեռուոր ճամբորդութիւն մը ըրաւ Պուլկար ճամբով գէպի Արեւելեան Հնդկաստան և գէպի Սուեյի Արշիպեղաղորը իր անձնական «Թամարա» զրոսանաւով : 1893ին երրորդ հեռուոր ճամբորդութիւն մը ըրաւ մինչեւ Ամերիկա «Տիմիթրի» Տոնաբի յաճախակով : Նոյն տարին տեղակալի աստճանով Խրիմի 73րդ հետեւակ զօրաբաժնին հրամանատար կարգուեցաւ :

1894 Յուլիս 25ին, Մեծ Իշխան Միխայելովիչ ամուսնացաւ արդի կայսեր հօր, Ալէքսանտր Գ. Չարին աղջկան հետ :

Ն. Կ. Բարձրութիւնը աներկիւղ նաւարկու մը ըլլալով հանգերձ, գիտութեան ու գեղարուեստի ալ սիրահար ճանչցուած է :

1892ին պատուակալ նախագահ ընտրուած է Ռուսիոյ գեղարուեստական ընկերութեան, որուն աշխատութեանց ինք մեծ եռանդով մասնակցած է, նաև Մեծ Իշխան Միխայելովիչ մեծ սէր ու համակրութիւն ցոյց տուած է գէպի բնապատմական և ցեղագրական գիտութիւնները : զորս է երկու



Ն. Կ. Բ. Մեծ Իշխան ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԵԼՈՎԻՉ

վութեանց, քաղաքական տագնապներու եթարկելու :

Ուստի պուլկար ազգը մեծ խնդումի մէջ է և իր արքայական հիւրերուն շքեղ ընդունելութիւն մը սարքելու համար ամէն ջանք կը թափէ, իր կարողութեան համեմատաբար բարձր զոհողութիւններ ընելով : Սպարանիէն 100,000 ֆրանք յաւկացուցած է իր հիւրերուն այցելութեան առթիւ հարկ եղած

հօր, Ալէքսանտր Բ. ազատարար Չարին ի յիշատակ շինուած արձանին բացման : Եթէ իշխան Ֆէրտիանտ յաջողի Չարին հաւանութիւնը առնել այդ այցելութեան համար, իսկապէս մեծագոյն նշանակութիւն պիտի ունենայ հօր Չարին փոքրիկ Պուլկարիա այցելութիւնը և բարոյական սարսփելի հարուած մը պիտի ըլլայ Թուրքիոյ համար՝ որ իր վերելքը պիտի զգայ պողպատէ

մեծածաւալ հատորներ, Արեւելեան Հնդկաստանի և Սէյլան կղզւոյն ճամբորդութեանց աստեղ հաւաքած զանազան տեղեկութիւնները ամփոփելով :

Նորին կայսերական Բարձրութիւնը Վառնա պիտի հասնի Սեւ Մովու պատերազմական նաւաբաժնին «Ռոսթրալ» զրահաւորով՝ որ շինուած է 1896ին և զինուած 10 գործիքներով :

Վառնայի մէջ՝ Մեծ Իշխանը պիտի գիմաւորուի Ն. իշխանական բարձրութեան, նախարարներէն, ազգային ներկայացուցիչներէն, «Զար Օսթոպոտիթէլ» կոմիտէի նախագահէն և ուրիշ պաշտօնական անձնաւորութեանց կողմէ :

Ք Ր Ո Ն Ն Ի Կ

Արտասահմանի հայութեան հանրային կեանքին մէջ վերջերս տեսնուեցան քանի մը միութեամբ կերպովներ, որոնք նպատակաւոր գուշակութիւններ կը թելադրեն ինծի ապագայի մասին :

Այդ երեւոյթներու ամենէն կարեւորն ու նշանակալիցն էր անշուշտ Հ. Յ. Գալստեանի կողմէն տասնամեակը, զոր տօնացին ժընէվէ մինչեւ Պուլկարի ու Ամերիկա՝ արտասահմանի գրեթէ բոլոր հայ գաղութները : Այս ամբիւ կատարուած խանդավառ ցոյցերը, որոնք շատ տեղերէ ներթափաքէս ալ արտայայտուեցան Գալստեանի կողմէն՝ եւ կը նկատուի սխալմամբ ընդհանուր նշան մը : Իրաւ է որ կոտորածներու օրերէն ի վեր մեր հանրային ասպարէզը շատ ակուր կերպարան մը առաւ, ամէն տեսակ պահունի կերպեր կրկէս մտան սանձարձակ եւ իրերու հետզհետէ վատթարացող գրութիւնը ծայրայեղ յոռետեսութեան մը մասնաց շատերը : Բայց այդ ամբողջ խառնաշփոթութիւնը, որ մեր ազգային զգեցողութեան յե-

ղակարծ ցնցումին անխուսափելի հետեւանքն էր՝ պիտի հանդարտէր վերջապէս օր մը, եթէ ընդունինք թէ հայ ժողովուրդը պարելու կոչուած ազգ մըն է : Անձկալիւր սպասուած այդ օրը այսչափ ալ չպիտի ուշանար, եթէ կեանքը իր բնական ընթացքին ձգուէր եւ կարգ մը անորակելի ստատիստիկներ առիթէն օգտուելով՝ յետագիմութեան անցողական շրջան մը բռնի կեցնելու ու մնալուն կացութիւն մը դարձնելու ոճրագործութիւնը չփորձէին : Ստույգ, որ կազմուած մարդերու կատարել սովի մը շնորհիւ, կրցած էին ժամանակին մենայնօրէի տակ անել Պոլսոյ գրական հրապարակը՝ ալ կարծեցին իրենց գրիչներուն մէջ գտած ըլլալ Կիրակէի մոգական գաւազանը, որով ուզած ժամանակին եւ ուզուած ձեւով պիտի կրնային ամենուրեք կերպարանափոխ ընել հայ ժողովուրդը :

Այս աներկմիտ յանձնապատասխանութեամբ էր որ Պոլիսէն խուճրով արտասահման անցան, եւ զէպքերն ալ առջի բերան թուեցան արգարացնել իրենց ակնկալութիւնները : Շատ չանցած յեղափոխական մեծ կուսակցութիւն մը հիմն տապալած ու իրենք անոր աւերակին մէջ որջ փորած էին : այնպէս որ այս անգրանիկ յաղթանակին մեծութեան արբիւժ խուճրին պետք կը փութար կանխաւետել «վեց ամիսէն միւս կուսակցութեան ալ կործանման» աներկարայութիւնը : Մասնաւորապէս այս նպատակին համար շտկուած թերթեր շուտով պաշարման մէջ առին այս կուսակցութիւնն ալ ու սկսաւ յարձակումը՝ տրամադրելի ամբողջ թափով :

Ձրպարտութիւններ, խեղաթիւրումներ, ժամանցներ, խեղկատակութիւններ կարկուտի պէս կը տեղային շորս կողմէն : Սակայն ճակատագրական վեց ամիսը անցաւ... մօտ վեց տարիներ ալ սահեցան ու հիմա նոյն այդ կուսակցութիւնն է որ աւելի քան երեք կանգուն ու կենդանի՝ իր գոյութեան տասնամեակը կը տօնէ ժողովրդային ընդարձակ մասնակցութեան մը հանդիսաւորութեամբ :

VIII

Այն օրէն ի վեր երկու շաբաթ անցած էր, Պրըշքով իր ընկեր Վլատիքովի բնակարանը կապէր, որ զայն գովելի հոգատարութեամբ հագուեցուցած էր ու կը սնուցանէր : Վլատիքով երկար թափառած ու տանջուած ըլլալուն, օտար երկրի մէջ նեղութեան ինչ ըլլալը կը մըտնէր, ատոր համար իր սիրտը ուրիշներու թշուառութեան կը կարեկցէր :

Վշտով ու տխրութեամբ համակուած՝ Պրըշքովը կը դիտէր, զոր բաղդը առած նետած էր պէտքերու, զգեցողութիւններու ու պայքարներու մէջ, հասարակութեան անտարբերութեամբ, ու նախապաշարուածներով միասին, ուր էն ամուր նկարագիրները հազիւ կրնան տոկալ, եւ յաճախ յոգնած էլին ան տղամիւս մէջ :

Օր մը Պրըշքով սենեակը առանձին եղած պահուն, մէկը զրան մօտեցաւ եւ առանց զարնելու ուժով հրեց ու ներս վազեց :

Մաքետոնսքին էր :

— Բարեւ, եղբայր, ոտնաց ու մէկէն Պրըշքովին վրայ նետուեցաւ, խանդապին գրկելով ու համբուրելով : Երկու օր է որ քեզ ամէն քարի տակ

րութեամբ : Կարելի չէ այս ամբիւ շաքի առջեւ չպատկերացնել զէմբրու այն ողբերգական ծամածուծութիւնը, որով յարձակման պարագլուխները որջերնուն մէջէն դիտեցին իրենց յաղթանակի կանխահաս յոյսերուն այս խոտոր վախճանը :

Անոնք զփոխային կատաղութեամբ իրենց գրիչները կրծելով անշուշտ ապշած մնացած են թէ՛ ինչո՞ւ հարուածը վրիպեցաւ այս անգամ :

Այս հարցին իրենք պիտի չկրնան խելք հասցնել երբեք, որովհետեւ ամբողջ կեանքին զրական մեղմիտութեան տուած՝ ո՛չ ժամանակ եւ ո՛չ ալ խելահասութիւնը ունեցած են հասարակական կեանքի ամենատարբական օրէնքները հասկնալու : Բայց, եթէ կուզեն, մենք կրնանք ըսել իրենց թէ թուուաւոր սլաքներու զէմ Գալստեանութիւնը անխոցելի պահող միակ զրահն է սկզբունքի գիտակցութիւնը կոչուած այն մեծ սուսքի նութիւնը, որ կը պահանջէ չենթարկուիլ երբեք ամբողջ յեղեղուկ տրամագրութեան քայքայիչ հոտնաքին : Արտասահմանի հայ հասարակութիւնը, որ կոտորածներու հարուածէն խելահորոյս՝ բաւական ազդուած էր այդ անպարսկերէն, երկարատեւ տարուբերումէ մը ետքը, այսօր վերջապէս կը գտնէ վերստին իր հաւասարակցութիւնը, մտքերը սկսած են հան դարտիլ, պղտորած դատողութիւնները պարզուիլ : Անոնք որ մեր ցուցումներուն ու զգացումներուն սկիզբէն ի վեր կասկածով կը վերաբերէին, կուսակցական հաշիւներու վերագրելով զանոնք՝ այժմ անհերքելի փաստերու առջեւ կը գտնուին : Անշուշտութիւնը փետեկուսներ բացած է մեր հակառակորդներու շարքերուն մէջ եւ հիմա իրենք են որ փոխադարձաբար զիրար գիմակաթափ կընեն : Մեղսակցութեան կամ անխոստովանելի զիտուեցումով վրայ հիմնուած բարեկամութիւնները չէին կրնար աւելի երկար տեւել : Ալ ժամանակն է սակայն որ մեր հասարակութիւնը խոշոր խաչ մը գնէ այդ տխուր իրադարձութիւններուն վրայ եւ իր ամբողջ ոյժը հաւաքելով դառնայ կենդանի գործին :

Տարինը կը թաւալին կանցնին, ապագան չգիտենք թէ ինչ անակնկալներ կը վերապահէ, մինչդեռ մեր բախտը կախուած է փախչող ամէն մէկ րոպէի գործածութեան եղանակէն :

ԿԱՐԻՃ

(Շարունակելի)

Թ Ղ Ր Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Յիւլի 21 Յունիս

Քաղաքիս Հայ. Յեղ. Գալստեանական թեմի կոմիտէն՝ մասնակցութեամբ Մակեդոնական կոմիտէին, սարքեց գրական և երաժշտական երեկոյթ մը, և միանգամայն ներկայացուց Ռաֆֆիի «Նէյի» Ձէլլէտտիսէն երկու պատկեր. գոյացած հասոյթը որոշուած է զրկել, Բարիչ հրատարակուող «Իրօ Արմէնիա» հանդէսին :

17ին, կիրակի գիշեր, պուլկար և հայ ազգէ խուռն երկուսու բաղմունքին մը փութացած էր ներկայ գտնուիլ Սասթ թէպէ՛ Յար Սիմէօն թատրոնը :

Փաքիկ սրահը ամբողջովին լեցուած էր : ճատեր նոյնիսկ ստիպուեցան ետ գառնալ :

Հանդիսականները անհամբեր վարագոյրին բացուելուն կսպասէին : Առաջին անգամ բեմին վրայ զաշնակին յենած՝ Պ. Մերձանով պուլկար երիտասարդ մը, կը պարզէ ներկաներուն երեկոյթին նշանակութիւնը ու կը ծանօթացնէ «Իրօ Արմէնիան», հայուն և մակեդոնացիին բարեկամ ու պաշտպան հանդէսը հրատարակող անձնուէր, զազափարի

չի հասցնես... փորդ կը ճաթի : Մաքետոնսքին մոլեգնութեամբ կը լափէր, երբեմն երբեմն պիտերն ալ շտկելով :

Նորէն պահարանին մէջ ձեռքը խոթեց, շիշ մը գրին առաւ ու մէկ շունչով իր շոր կողորդէն վար թափեց :

— Դու, հարսնիքները գտնուող Գրալի Մարթին (՝) պէս այնչափ կուտես ու կը խոն... դիտես... որ միայն դուն պատասխանատու ես Վլատիքովին—է՛, ըսէ՛, ո՛ւր կը թափառէիր մինչեւ հիմա :

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

(Քրայի-Մարթոն, Պայքանեան սլաւ ցեղերու թագաւորն է : Իր քաղաքործութիւնները ու որկրամոլութիւնը օտարապիլի կարգ անցած է, իրեն համար սովորական բան է եղեր մէկ լեռնէն միւսը ցատկել, իր գրինի գաւաթը 72 օխ է եղեր, ձեռքի մէկ շարժումով քանի մը հարիւր գլուխներ կը թօցնէ եղեր :

Մ. Թ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Ի. Վ Ա Ջ Ո Վ

ՈՋ ԿՐ ԽՂ ՃԱՆ ՈՋ ԿՐ ՍԻՐԵՆ

VII

(Շար. հաստոր) քիւրկն)

— Ես ալ քու գրութեանդ մէջ եղած եմ, եղբայր, եւ աւելի վատ գրութեան մէջ, ստորութիւնը փորձած եմ, այդ անիծալ ստորութիւնը, եւ ալ յոգնած եմ կեանքի պայքարներէն ու տղամիւս : Արդեօք ե՞րբ պիտի գայ այն ժամը՝ որ մեզի ճանչցնէ թէ ինչո՞ւ համար կապրինք, ըսաւ ուսուցիչը արտուրեանք երբ մտան իր սենեակը, ուր հաճելի ջերմութիւն մը կը տիրէր :

— Նստեցէ՛ք, տաքեցէ՛ք, Պրըշքով : Աս ի՛նչ սատանայի ցուրտ է : Իէթրէ շուտով ճաշը բեր, գոչեց Վլատիքով իր ընտիր ջուխայէ բալթօն ու սեւ աստրախանէ գլխարկը պատէն կախելով :

յալթանակի համար կուող, ու մաքառելէ չի վհատող աչնիւ անձնաւորութիւնները: Պ. Մերձանօթ թէեւ երկար ճամբորդութենէ մը հաղիւ վերադարձած՝ յոգնած բեմ կելլէր, բայց կըրցաւ իր ազգու խօսքերով խորապէս յուզել հանդիսականները: Ծափահարութիւններու տարափի մը աակ գոցուեցաւ վարագոյրը:

Տիկին Ա. Թամիրեանց և Պ. Ի. Սօթիրօֆ, առաջինը դաշնակի վրայ, երկրորդը ֆիւթով յաջողութեամբ նուագեցին եւրօպական եղանակ մը:

Հայ օրիորդաց երգեցիկ խումբը, որուն կընկերանար նաեւ Տիկին Ա. Թամիրեանց դաշնակով, երգեց խիստ յաջողութեամբ *trottez gaiment* ֆրանսերէն երգը, գեղեցիկ տպուորութիւն ձգելով հանդիսականներուն վրայ և խելով եւսանդուն ծափահարութիւններ:

Պուկար և Հայ երգեցիկ խումբը երգեցին հայերէն «Թող կորնչին» և պուկարերէն «Նարէթ Յունացի» երգերը անսպասելի յաջողութեամբ, հանդիսականները փուռն ծափերով կրկնութիւնը խնդրեցին:

Պուկար երգեցիկ խումբը սուանձին երգեց երկու երգ, լիուլի գոհ ձգելով ներկաները: Պ. Արկիրօֆ երկու ոտանաւոր արտասանեց հիանալի ընդունակութեամբ:

Տիկին Ա. Թամիրեանց դաշնակի վրայ նուագեց խիստ յաջողութեամբ եւրօպական եղանակ մը, Հանդիսականներուն անընդհատ ծափահարութիւններէն յետոյ, Տիկ. Թամիրեանց կրկին բեմ երեւցաւ շնորհակալութիւն յայտնելու: Այդ միջոցին երգեցիկ խումբի օրիորդները «նօթագիրք» մը նուիրեցին տիկնոջ՝ իրենց ընկերուհիներէն մէկուն ձեռքով:

Օր. Զարուհի Դաւիթեան կարգաց վերջին «Դրօշակ»ի մէջէն «Ղարիպ ուխտաւորը» օրիորդին ձայնը բնական յարմարութիւն ունենալով տխուր դրուածքներ կարգալու, յաջողութեամբ վերջացուց ընթերցումը յուզելով սնկնդ իրներու սրտերը: Ներկայացումն ալ խիստ փայլուն անցաւ, և որովհետեւ բիւսը հրատարակուած չէ, այլ հապճեպով բեմին վրայ պատրաստուած մէկ արարուած մըն է միայն, հարկ կը տեսնեմ քանի մը խօսքով բովանդակութեան ծանօթացնել ընկերացիները:

Ա. պատկերին՝ ձեւալէտտիւնի բանակը պատրաստութեան մէջ է. ամէնքը կը խօսին կատարուելիք արշաւանքին վրայ, խօսակցութիւնը կընդհատուի

ճէյիսին վրանէն դուրս ելլելով՝ որ, քանի մը հարցութիւններէ յետոյ, կուսի իր ճառը, ձէլալէտտիւնի ճառը արդէն յայտնի է ընթերցողին: Սմբոխը ոգեւորուած ճառէն՝ կերպու չի խնայել կեանքը հայերուն: Ճէյիսը վրանը կը հասնի հանգստանալու համար. աստին իր հաւատարիմ քէօլէնները վառուած մօտաւոր ապագայի փոյլուն երազներով, կիյնան զուարճութեան մէջ. իրենց մէջ աւ ձայն ունեցողը քրքրական երգ մը կուսի: Ճէյիսը անհանգիստ ըլլալով դուրսի ձայներէն, սրտենկաւ դուրս կուգայ վրանէն ու բանակը գործի կը գրկէ... յաջողութիւն մալթելով:

Այսպէս կը վերջանայ Ա. պատկերը:

Բ. պատկերը կը ներկայացնէ Սարհատի տունը, տնեցիք, Սարհատի քոյրերը, նշանածը, իւրաքանչիւրը զբաղած իրենց տնային գործերով: Մամօն եկեղեցիէն կը վերադառնայ. հանգստանալէն յետոյ, կը պատմէ ազգութեւ Սարհատին համար եւ: Տան ազդիկներու խօսակցութեանէն որոնք Սարհատի բանած ճամբան կը գովէին՝ կը պարզուի որ Սարհատ ծպտեալ խմբով տեսնուեր է շրջակաները:

— Նշանաւոր քիւրտ պէյ մը սպաննողն ալ Սարհատն է եղբր, մէջ նետուելով կըսէ «Ասիկն» Սարհատի նշանածը:

Աճապարանքով ներս մտնող գրացի կինը, գիւղին մէջ տիրող իրարանցումը կիմացնէ: Ետո շանցած հեւ ի հեւ վազելով ներս կը նետուի Թորոս էմին և սպաննացող վտանգը տեղակացնելով, դուրս կը հրէ ամէնքը: Թորոս էմին դրամները պահած ժամանակ, ձեռքը կը հանդպի Սարհատի հին ատրճանակին ու ապշած կը մնայ: Քիւրդերը ներս կը խուժեն, այդ միջոցին ինք փոխանակ հրաշքով գտնուած զէնքով ինքզինքը պաշտպանելու, զայն ետին կը պահէ:

Քիւրդ մը կարծելով թէ պահածը գրամ է, կը յարձակի վրան և սակայն յուռացածին տեղ ատրճանակը ձեռք կը ձգէ: Թորոս էմին թէև վախկոտ, սարուկ բայց և այնպէս չուզեր յայտնել ընտանիքին և գանձին տեղը, նոյնիսկ քիւրդին մահացու հարուածներուն տակ:

Քիւրդերը աւարով կը հեռանան:

Սարհատ իր ընկերներով՝ զորք քիչ սուղ քիւրդերու ձեռքէն ազատած էր, ներս կը մտնէ և խումբը կը խրկէ հանգստանալու. ինք չի կրնար բաժնուիլ իր աւերակ տունէն, ուր կը փնտռէ իր մօր, հօր, քոյրերու յիշատակը: Սարհատ կը ցաւի իր ոչ հասած ըլլալուն համար, յանկարծ

վիրաւորի մը խուլ հառաչանքը իր ականջին ծանօթ կուգայ, ու աչքերը պտտեցնելով կը տեսնայ գետին փռուած հօր գիւղէ: Բնազգօրէն ձգելով հրացանը գետին, կը գրկախառնուի մահուան մօտեցած հօր հետ: Հայրը կ'օրհնէ իր որդին եւ «յանցանքը» իր ու իրենց պէսներուն կը գտնայ, բայց ոչ, հօրը մեռնելէն ետքը, Սարհատ կ'անիծէ հայրը, ու նմանները: Հայրը սպաննող քիւրտերը ներս կը մտնան աւարի մնացորդը տանելու. կը տեսնեն մարդ մը՝ զօր թալանի եկած քիւրդի տեղ գնելով, կը սկսին փաստարանել իրենց թալանը իրաւունքին վրայ, ու երբ քիւրդերը կը մօտենան՝ Սարհատ երկուքն ալ կը սպաննէ: Գետին փռուող քիւրդերու հաւարի կը հասնին ուրիշ քիւրդեր, միւս կողմէն ալ վրայ կը հասնին Սարհատի ընկերները և կը սկսի կռիւ, որ կը վերջանայ Սարհատի խումբին տարած յաղթութեամբ:

Ներկայացուեցան երկու կենդանի պատկերներ ևս. առաջինին մէջ քիւրդերը գերի բռնած են ազդիկներ, կիներ և պատանիներ ու չուանով կապած են զանոնք: Երկրորդին մէջ, Սարհատ իր խումբով օգնութեան կը հասնի, ու ազատելով գերիները Պարսկաստան կը ճամբէ:

Գերակատարները բոլորն ալ շատ յաջող կատարեցին իրենց գերիները: Հանդիսականները յուզուած, գոհ արամադրութեան տակ տեղերին կը վերադառնան:

Ամերիկայէն յետոյ, արտասահմանի մէջ Ֆիլիպին զգաց «Բրօ Արմէնիա» ի նիւթապէս անջակցելու պարտքը և կատարեց, հանդէս մը տալով: Փափաքելի և միանգամայն յուսալի է որ, Պուկարիոյ բոլոր հայաշատ քաղաքները հետեին միլիպէի տուած օրինակին:

Վ.Ա.ՉԱՆ ՄԱՋԼԱՆԵՍՆ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ  
(ՊՈԹԷՎԻ 25 ԱՍԵԱԿԻ ԱՌԵՒԻ)  
(Շուր. 328 քիւիկ և վերջ)

Պօթէվ, այդ աննման հերոսը, որ իր քաջագործութիւններով անմոռանալի մնացած է արդի պուկար ժողովրդին մէջ, այլևս կենդանի չէր: Թոր յուզումի մէջ թողուց իր անբաժան ընկերները, որոնք զեռ պատերազմը կը շարունակէին. բայց Պօթէվի մահը թույլուցած ու վհատեցուցած էին զիրենք: Անոնցմէ մէկ քանին խկոյն նետեցին իրենց հրացանները և վազեցին իրենց սիրելի վոյվոտային քով ու արտասուածքով աչքերով սկսան ջերմագին համբուրիլ ու մօթին մէջ հաւաքուած մազաններով ու խոտերով ծածկել անոր զեռ չի պաղած մարմինը:

Այդ 200 հայդուկներու խումբը

Ղլատուած, տանորդուած էր: Մնացածներէն մաս մը, յուսահատ, հազիւ կարողացաւ գիշերային միջութեան մէջ Սերպիոյ սահմանագլուխը անցնիլ. իսկ միւս մասը անձնատուր ըլլալով, Միջագետքի Տիգրանակերտ քաղաքը աքսորուեցան:

Այսպէս այդ հիանալի հերոսները ինկան, առանց իրենց նպատակին հասնիլ կարենալու ժողովրդին ազիտութիւնը ու զոյց տուած պաղարիւնութիւնը մեծագոյն արգելք եղան անոնց: Եւ սակայն իրենց մահը ապագայ սերնդին ամենէն թանկագին յիշատակը եղաւ, որ երբեք չի պիտի մոռցուի երախտաղետ ու անկեղծ սերունդներէն: Ինչ այսօր մեծ ծարաւով կը կարգացուին իր յեղափոխական ոգով գրուած բանաստեղծութիւնները, որոնք միանգամայն ամենէն թարմ ու սիրելի ընկերաբանական գաղափարներով լեցուած են, արդի երիտասարդութեան նոր ուղղութիւն մը ներշնչելու կարող: Պօթէվ այսօր պաշտուելու չափ կը սիրուի ոչ միայն պուկար ազգէն, այլ ամէն ազգի ու ամէն ժողովրդի յեղափոխականներէն և ընկերպարականներէն:

Ապրիլ 20ին եւ Մայիսի 1ին տօնուեցան ազատամարտիկան յորիւնանները, իսկ Մայիս 18ին եւ 20ին Պօթէվի յորիւնանը:

— Մեր բուն նպատակն էր խօսիլ այս վերջինին վրայ:

Մայիս 18ին, առաւօտեան ժամը 9ին, մեծ բազմութիւն մը հաւաքուած էր. բայց փոքր մաս մը միայն զէպի կռիւին բուն վայրը վերաձայի պալանքը բարձրացաւ: Այդ բազմութիւնը կը բաղկանար ուսուցչական խումբէն՝ աչակերտներով միասին, 40ի չափ Սօֆիայի բարձրագոյն վարժարանի ուսուցիչներէն և շրջակայ Մրամօրէն, Պանիձա, Չիբէն գիւղերուն գիւղացիներէն, ընդամենը մօտաւորապէս 1000 հոգի, որոնք Պօթէվի 8 ուղ ընկերներու առջնորդութեամբ յառաջացան զէպի Միլիւն-Քամբը կոչուած տեղը, ուր սկսուած էր Պօթէվի առաջին պատերազմը:

Երբ այս թափօրը բարձրացաւ Պալքանի վրայ, իր առջեւ տարածուած տեսաւ Միլիւն-Քամբը իր հաշակեղ սեփարանով՝ իսկոյն սեփարանի փայտէ խաչը որ ազատութեան առաջին օրիորդն Պօթէվի ընկերները դրած էին հոն և որոնք այս հանդէսին մասնակցելու բարեբախտութիւնը ունեցած էին: Հոգեհանգիստը կատարուելին ետքը մահարձանի մը հիմը գրուեցաւ, զոր պիտի ամբողջացնեն գիւղացիները: Հանդէսը տեւեց մօտ 2 ժամ: Թափօրը ճամբայ ելաւ և ժամը 6ին հասաւ քաղաք: Քաղաքի բնակիչները զօրախումբը իր նուագով միասին, թափօրին բնկերանալով յառաջացան Պօթէվի թաղուած վայրը և մեծ պսակ մը զետեղեցին անոր տրձանին վրայ:

Մայիսի 20ին շքեղ հանդէս մը կատարուեցաւ Վոյա կոչուած տեղը, ուր Պօթէվ սպաննուած էր իր վերջին պատերազմը կատարած միջոցին: Պօթէվի ընկերները մեծ գոռութեամբ դասն այն տեղը ուր 25 տարի առաջ հողին յանձնած էին իրենց հայրենասէր ու քաջ ընկերը, հոն ալ հոգեհանգիստ կատարեցին և իրենց ձեռքով դրին կառուցուելիք մահարձանի մը հիմնաքարը:

Երեկոյան քաղաք հասնելով դարձեալ գացին միեւնոյն արձանին յով. շատ մը յուզիչ արտասանութիւններ ըսուեցան, որոնց ազդեցութեան տակ Պօթէվի Լեկերանի ընկերները խիստ յուզուած՝ յառաջ նետուելով համբուրցին եւ արցունքով ցողեցին իրենց սիրելի վոյվոտային հողակոյտը ու թարմ խոտերով եւ ծաղիկներով ծածկեցին այդ թանկագին ընկերով արձանը, որուն անմոտանալի յիշատակը 25 տարիներէ ի վեր դեռ այնքան վառ մնացած էր իրենց սրբաին մէջ:

Պօթէվի այնպիսի մեծ յիշատակ մը թողած էր պուլկար ժողովրդին մէջ որ սերունդէ սերունդ անմոտանալի պիտի մնար: Անոր յեղափոխական ոգով գրած բանաստեղծութիւնները դեռ ախորժով կը կարդայ ներկայ սերունդը:

Պուլկար ազգը, Պօթէվի եւ անոր նման ազնիւ հայրենասէրներու շնորհիւ թօթափեց իր 500 տարիներու գերութեան շրջանն եւ 25 տարուան ազատ շրջանին մէջ, չի մոռցաւ միշտ կենդանի պահել անոնց յիշատակը: Պուլկար ազգը այս տարի մեծ շուքով կատարեց ազատութեան 25 ամեայ յորհրդանշանը, որուն մեծ յարգանքով մասնակցեցաւ ախորժ զորաբանակը, յեղափոխական կոմիտէներ, ընկերակազմներ եւ ուսուցչական խումբեր:

Վերջապէս հանդիսականներէն մին կարճ ատենախօսութիւնով մը շնորհակալութիւն յայտնեց Պօթէվի ողջ ընկերներուն՝ որոնք իրենց ներկայութեամբը աւելի մեծ նշանակութիւն տուին հանդէսին:

**Սօֆիա քաղաքի հինգերորդ վիճակահանութեան վեցերորդ կարգի մէջ շահող մեր բոլոր յաճախորդներէն կը խնդրուի որ ընդօրոյթ ներկայացնեն իրենց տոմսակները, փոխարժէքը ստանալու համար:**

Գլխաւոր գործակալ  
Ս. ԳԱՐՔԻԷԼԵԱՆ  
Վառնա, 26 Յունիս

**Խ Ն Գ Ի Ր Ը**

Մայիս 19ին Զուիցերիայի հայ ուսանողները ժողով կազմելով հաստատեցին ընկերութիւն մը որու գլխաւոր նպատակն է բոլոր ուժով աշխատիլ ի նպաստ հայկական արգար դատին եւ գործնական միջոցներու դիմել հայոց ազատութեան կռուի համար ռազմական տեսակէտով օգտակար մարդիկ պատրաստելու: Ժողովը որոշեց ներկայիս խնդրել Ա. ամեն ազգի ազնիւ ուսանողներէ որ աջակցին մեզ մեր այս ձեռնարկին մէջ (անդամակցիլ ցանկացողները կը ստանան ընկերութեան կանոնադրը): Բ. ժողովը խորհելով որ գործածուած նամակագրոյցներու եւ բաց նամակներու վաճառումով իր մուտքը կրնայ բարձրացնել, որոշեց խնդրել հայկական դատի բարեկամներէն որ հաճին մեզ զրկել այդպիսի գործածուած նամակագրոյցներ եւ տոմսեր:

Յուսալով որ այս փոքրիկ նուէրը ոչ ոք կը զրանայ առաջուց կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Քարտուղար Նախագահ  
Ա. Մարգարեանի Քարչ Քիլֆիհր  
Հասցէ՝  
M. Willy niederhauser  
Schiers Grisons Suisse

**Ա Ջ Ա Տ Բ Ե Մ**

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ս Ը  
ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ԽՐԵԱԿԻՐ  
ՅԱԿՈՅ ԳՈՒՐՊԷԹԵԱՆԻՆ

Վառնա հրատարակուող «Իրաւունք» թերթին 44րդ համարին մէջ յօդուած մը հրատարակուած է «Ինչ է գաղտնիքը» խորագրով և Յ. Գ. ստորագրութեամբ, որ նոյն ինքն թերթին խմբագիր Յակոբ Գուրպէթեանն է:

Յիշեալ յօդուածին մէջ անունը չյիշատակուած անձի մը նկատմամբ ըստ շատ օրոշ ամբաստանութիւններն եղած են. «կրկնակ կրաւորական գերովը ծանօթ ստահակ. — Փրօյզըրէն աղբատին հացը գողցող. — մեր խմբագրութեան հասցէն գողցող աւալակ. — Եան մը դիակ ուր անբարոյականութեան ամէն տեսակ որդերը կը վիտան»:

Եւ որովհետեւ յիշեալ յօդուածին հեղինակ Յ. Գուրպէթեան ապրին անդին ձանձնած է որ վերոյիշեալ օրոշ ամբաստանութիւններով զիս՝ ստորագրողս ակնարկել կուզէր, հետեւապէս հրապարակաւ կը հարցնեմ իրեն՝

Թէ իրօք այդ ամբաստանութիւններով զիս ակնարկել կուզէր:

Եւ թէ՛ եթէ ինք վատ գրպարտիչ մը չէ՛ կը համարձակի՝ իր թերթին մէջ հրապարակաւ յայտարարել որ իր ամբաստանութիւններն իսկապէս ինձի ուղղուած էին:

Այո՛ կամ ոչ (\*):  
Երուսաղիմ Մուսիֆէյիսանիւան

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ (\*\*)  
Առ Յակոբ Գուրպէթեան

ՍՏԱԽՈՍՈՒԻԻԻՆԸ աստուածացնելու պատիւը՝ հայկական լրագրութեան վիճակը շարունակելով «Իրաւունք» թերթին, պարկեշտ... խմբագիր, Յ. Գուրպէթի, այսինքն քեզ կը պատկանի եզեր, Բնաւ չեմ գարմանար, որովհետեւ տաճկական բարբերով անած և զարգացած մարդուկէ մը աւելին չէր կարելի սպասել: Քեզի պէսներու հետ բնաւ չեմ ուզեր զբաղիլ, և ոչ իսկ թուք մը փակցնել ճակատին:

Նախկին պատասխանատու «Իրաւունք» թերթին  
Մ. ԶԳՕՆ  
Վառնա, 24 յունիս 1901

(\*) Եթէ յիշեալ Յ. Գուրպէթեանը իր ամբաստանութիւններով զիս ակնարկելու ցած պարագային՝ Երուսաղիմի մէջ հրատարակուած յօդուածի մը հեղինակը կը նկատէ զիս, աւելորդ չեմ համարիր յայտարարել հոս թէ հեղինակը չեմ այդ տեսակ յօդուածի մը եւ թէ երբեք հեռաւոր կամ մտաւոր մասնակցութիւն ունեցած չեմ այդ կարգի յօդուածի մը հրատարակութեանը: Ե. Ս.

(\*\*) Պ. Կ. Շարահիւսեանց, ձեր գրութիւնը յաջորդով պիտի ապագրենք:

**Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ն Ի Կ**

Պերլինէն «Մշակ»-ի կը գրեն թէ՛ երիտասարդ հայ նկարիչ Վարդան Մախոխեանի, որ եղբայրն է պօլսահայ ծանօթ Տօթթ. Մախոխեանին, երկու նկարները Պերլինի միջազգ. մեծ գեղարուեստական ժիւրիէն գնահատուելով՝ ցուցադրուած են Ինուանի բրոֆէսէօրներու նկարներուն քով: Մախոխեանի տաղանդը արդէն գնահատած էին շատ անուանի գրագէտներ, ինչպէս նաեւ Այվազովսքին:

— Բեթերսպուրկի հայ քահանաները հայոց մէջ ամենէն բազմաթիւ կրօնաւորները եղած են: Երկու քահանայ, մէկ աւագ սարկաւազ, մէկ սարկաւազ և մէկ տիրացու 8433 ր. կտանան, բնակարանով եւ փայտով միասին 4740 ր. ուրիմն հինգ հոգի 13,173 րուպլի կառնեն. սակայն ցաւալի է որ սասնկ դրութեան մէջ գտնուող այդ կղերները անգոյն ու անշնորհք մարդիկ են, և սակայն ամօթ է Բեթերսպուրկի պէս քաղաքի մը հայ գաղութին համար:

— Այվաթեան եպիսկոպոսը ճամբայ ելել է յունիս 3ին դէպի Էլմիսթին: Ստուար բաղմոյթիւն մը բաւական ճամբայ ընկերացել է իրեն. բաղմոյթեան մէջ կը փայլին եղբր երիտասարդները իրենց շատութեամբ: Ասիկա նշանակութիւն ունի Այվաթեան եպիսկոպոս երիտասարդներուն է:

— Մեր բարեկամներէն մին մեզի կրմացնէ թէ Տ. Յ. Պօնճուգեան վերջերս Օտէսա գացած է լրկ անձնական բարեկամի մը հետ տեսնուելու համար, և որպէս զի «Շարժում»-ի 328 թիւին Այգալիին քրոնիկի մէջ գրուած թիւրիմացութեանց տեղի չիտայ, կը վստահեցնէ մեզ թէ Տ. Պօնճուգեան ոչ մէկ պատուիրակութիւն յանձն առած չէ իր վրայ:

— Քաղաքիս ուղգ. երկսեռ վարժարաններու քննութեանց վիճակացոյցներու բաշխման հանգէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի յունիս 1ին կէս օրէն ետքը, ժամը 2ին Սանդրալի սրահին մէջ:

— Քաղաքիս երկսեռ որբախնամի վարչութիւնը կը ծանուցանէ թէ շնորհակալութեամբ ստացած է 18 ֆր. 50 սանդիմի՝ Բրովատիլի և Վառնայի զանազան ազգայիններու կողմէ եղած նուէրները:

**Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր**

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա  
Հիւպատոսներու ուսած վերջին տեղեկագիրներու համաձայն, Մուշի գաւառին քիւրտերուն և հայերուն յարաբերութիւնները

խիստ մտահոգութիւն պատճառող երեւոյթ մը առած են. Մուշ քաղաքին մէջ, քիւրտերը ահագին սարսափ ձգած են. զինուած թուրքերու քուրտեր շարունակ կը շրջին քաղաքին մէջ: Հայերը չեն համարձակիր հրենց տուններէն դուրս ելլել, շուկան գրեթէ զոցուած է: Քիւրտերը այնչափ տեղեր 14 հայ սպաննած են: Հաղորդակցութիւնները Մուշի և շրջականերու միջեւ, ընդհատուած են, Մոկուսք գիւղը ամենէն աւելի քիւրտերու յարձակմանց ենթարկուած է, որոնք հայերը կը մեղադրեն Մուշի Շէրիֆ աղան սպաննած ըլլալուն համար: 150ի շփ հայեր բանտարկուած են և Ս. կարապետի վանքին շրջակայ հայ գիւղերն ալ քիւրտերէն թալանուած են:

— Այլպատեացի ազնուականներ Պօլիս հասնելով Երլազլի յիշատակագիր մը ներկայացուցեր են, Սուլթանէն պահանջելով Այլպանիոյ կառավարութեան համար իր սուած խոստումներուն իրագործումը: Կը հաստատեն թէ այս դրմումը դէշ տպաւորութիւն թողած է Սուլթանին վրայ: 100է աւելի իսլամներ Ելմէն տքորուեր են տաճկական շոգենաւով մը:

— Այն սերպուտուցիչները որոնք Փրիշտինայի մէջ բանտարկուած էին, կարելի չէ եղած ազատել որովհետեւ իրենց քով յեղափոխական թղթակցութիւններ գրուած են:

— Նորագոյն խիստ հրամաններ արուեստան թուրք ոստիկանութեան նախարարին, որպէս զի կասկածելի անձերուն խիստ ուշադրութեամբ նայիլի, նմանապէս խիստ հրամաններ արուեստան մարտային վարչութեան, որպէս զի պայթուցիկ նիւթերու մուտքը ամէն միջոցներով արգիլէ:

— Անդիական, զերմանական և իտալական 21 զրահասորներ Պօլիս պիտի ույցելին, երբ ուսուական նաատորմիլը Պուլկարիա հասնի, անշուշտ Ռուսիոյ հակացոյց մը ըրած ըլլալու համար:

— Ժանտախուր երկու շարժեթի վեր սկսած է ճարակիլ Պօլսոյ մէջ: Կալաթաի մէջ յոյն մը և իտալացի մը համաճարակէն բռնուեր են: Պօլէն ելլող ճամբորդներու համար 11 օր քարանդինա հաստատուած է:

— Սուլթանին երկրորդ կինը մեռել է:

Отговорникъ:  
Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность — Варна.